

րել այդպիսի մէջ գործ և մի և նոյն ժամանակ պիտի հեռացնել տանից այն մարդկերանց որոնց վրա չէ կարող յոյս դնել: Այդպէս էլ անուամբ, սպանութիւնից մէջ քանի որ առաջ արձակում է մէկ հին ծառայի և նրա տեղ բռնում է անծանօթ մէկգրեցի մէկին, ներկայ մեղադրելով Գաբրիէլին: Գաբրիէլ Զատուան միայն չէր կարող գործել, անշուշտ նա և բոլոր մեղադրեալները մէկ խօսք ունէին, այդ երեւում է ամեն մէկ կասկածաւոր վարմունքից: Իսկ Զատուան դուռն է ամէնքէ: Գուք լսեցիք պ. պ. դատաւորներ նրա տարօրինակ վարմունքը սկսած առաջին րօպէից անց: Երբ յետոյ շարունակ բոլոր ժամանակ լսեցիք ինչպէս նա վերի հարկից փակած պատուհանից լսում է պառաւ կնոջ ձայնը, թէ և նա ինչպէս խոստովանում է սատիկ յոգնած էր քաղաքից վերադառնալուց յետոյ, այնպէս որ իր շորերն անգամ չը կարողացաւ հանել, այլ կանչեց Զուրաբին որ սա հանէ շորերը և ուրեմն իսկոյն պարկեց պէս նա պիտի քնէր, բայց իմանում է ծեր կնոջ «Նինայի» կանչելու ձայնը, իսկոյն ներքե է դառն հազնված և հանգուցեալ մայրը նկատում է որ նա սատիկ վրդովւած է, դուռում է, շփոթւում է, դադանի խօսակցութիւններ է անում ծանանների հետ, ակամայ իրը թէ սկսում է որոնել Նինային և վերջը նա առաջինն է այն միտքը տալիս թէ դուցէ Նինան խեղդուել է և հաստատ քայլերով իջնում է նեղ քարաժայռ ձանապարհով և առաջինն է գտնում խեղդվածի շորերը, և նկատելու պէս վերցնում է շորքը, բայց իրը ուշքի գալով դարձեալ դնում է տեղը ստելով «Թէ տրանք (շորերը) ոստիկանութեան են պատկանում»:

Վերջապէս Զատուան կամենում է ապացուցել իր ալիքին, իր բացակայութիւնը այդ երեկոյ տանից և դրա համար կապում է իրարու հետ մէկ քանի անկապ անցքեր: Նա ասում է որ այդ երեկոյ նա նախ և առաջ գտնում է դերձիկ Կապանաձէի մօտ վերցնելու իր վարտիկը (բրիւլը) որը տված է լինում իրը թէ կարկատելու 2 շաբաթ անցքից առաջ, յետոյ թէ այդ տեղից գնում է Զարուխանցների խանութը և առնում է մէկ շարժ և այդ տեղից գնում է Շախպարտիկանցի դերասանը և առնում է քինա և կոշտ երկ (մազուլի) համար դեղ:

Սկզբնական քննութիւնից երեւում է որ բացի մէկ հին ձմեռայ վերարկու (պալտո) ուրիշ ոչինչ չէ լինում թողած Զատուան Կապանաձէի մօտ, որը թէ և հիմա ներկայացնում է մէկ բրիւլ որը ինչպէս երեւում է ներկայ քննութիւնից չենք մէկ բան է, որովհետեւ նախ որ այս բրիւլը նման չէ այն բրիւլին որի տեղը նկարագրեց ներկայ քննութեան մէջ մեղադրեալը և անհատատի է որ Կապանաձէն, որ ինչպէս խոստովանում է դրա գործակատարը հազիւ թէ 12 կտոր բրիւլ գտնուում են իրանց գործարանում, կարողանար անցքից յետոյ համարեա 4 ամիս չը գտնել պահանջած կտորը, երբ քննիչը նրանից վկայութիւն է առնել նոյն իսկ նրա գործարանում, թէ նրա մօտ թողած կայ մէկ բրիւլ:

Չարուխանցները խոստովանեցին որ նմանապէս չարժեր եթէ առած է նրանց խանութից, համաձայն իրանց հաշւապահի, չէր կարող առած լինել անցքի երկուսն և վերջապէս դեղատան գրեցի երեւում է որ Զատուայի յիշեալ դեղերը եթէ առած են այդ դեղատանից, պիտի առած լինէին անցքի միւս օրը, մօտաւորապէս 8 ժամին առաւօտեան:

Սորանից յետոյ պրօկուորը սկսում է դադապար մեղադրել Գաբրիէլին և միւս մեղադրեալներին մի և նոյն առողջամիտ և հաստատ հիմանց վրա:

Պրօկուորից յետոյ խօսեցին մեղադրեալների պաշտպանները, որոնց մասին միւս համարում:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԽՈՒՑ

Մարտի 2

Յուսամ ամեն մարդ անկողնայիցը համաձայնով, որ լուսաւորել մի ազգ կարելի է այն ժամանակ, երբ այդ ազգում գտնվում են լրագրիւններ, հիմնաւոր ազգային դպրոցներ, ընտանեկան դատարարական և այլն:

Անուրանալի է, որ մեր հայ ազգը, թէ և տաւալին ամբողջապէս լուսաւորված չէ, սակայն այս վերջին ժամանակներում երեւցան նրա մէջ ազգային գէպի լուսաւորութիւն առաջնորդող լրագրիւններ և անձինք:

Այս, ինչքան բազմաւոր է այն ազգը, որի մէջ գտնվում են այդպիսի լրագրիւններ և անձինք, որոնք փառասէր և շահախնդիր լրագրիւնների լարած որդալթներին համբերութեամբ տանելով և աւարտի ժողովրդի դատողութիւնների վրա ցաւելով, առաջնորդում են ազգը դէպի լուսաւորութիւն: Թող «Մշակ» լրագրիւնը յուսայ, որ մի ժամանակ իր քրտնալան աշխատութիւնների պտուղը առատապէս կը վայելէ, Հայ ազգը և նրա դաւաճները այնքան երախտամոռ չեն, որ իրանց դէպի լուսաւորութիւն առաջնորդող, ժամանակի պահանջներին յարմար աշխատակցի անմուտց ջանքերն ոտնակոխ անեն: Թողնելով այս, կը խնդրեմ պատուել ընթերցողիս հետեւել ինձ մեր համարում հայ հասարակութեան ամեն մի անուն և ուշադրութիւն դարձնել նրանց ընտանեկան դատարարական վրա, չեմ ասում դպրոցների վրա, որովհետեւ մեր համարում հայ հասարակութիւնը սատիկ ազգատուութեանց ճնշված, չէ կարող ունենալ իր աւերակների մէջ հիմնաւոր ազգային կանոնաւոր դպրոցներ: Գուք կը նկատե՞ք թէ ինչպէս մեր շառաւիղի ծնողաց հոգաբարձութեան ազգեցութիւնը իրանց որդոց վրա այն է, որ նրանց որդիքը լսած չը լինելով նրանցից ազգի և ազգութեան անունը, դուրս են գալիս նիւթականութեան ծառայելու, բնական զուրկ բարոյականութեան և ազգի առաջադիմութեան դադարեալներին:

Ազգիկների մասին ևս նրանց հոգաբարձութիւնը այն է, որ պահեն, մեծացնեն, պաշտաւ և փառաւոր հազուատներով կարգարեն և ամուսնացնեն նրանց, որքան կարող են հարուստ իշխանի որդու հետ, թող այս յետինը լինի պակասաւոր բարոյականութեանց, խեղճից և բանականութեանց, չեմ ասում սիրուց առ իրան ամուսնի (սա մեր շառաւիղիների համար մի վերացական առարկայ է): Մեր ծնողաց համար մեծ բաղաւորութիւն է ունենալ մի այսպիսի փեսայ, թող ինչ պակասութիւն ունի, ունենայ, միայն թէ «Մակարեայի» լինի: Հատ անգամ հարսնացու օրիորդը, ոչ թէ միայն չէ սիրում իր փեսայացուին, այլ և նրան տեսնել չէ կամենում, բայց նրա անգութ ծնողներն անում են նրան զոհ իրանց բռնաւոր կամքին և յաւիտեան անբաղաւորում են իրանց հարազատ դաւաճը, որովհետեւ մի այսպիսի օրիորդը չը պէտք է վայելէ ընտանեկան քաղցր կեանք իր ամուսնի հետ, որին երբեք չէ կամենում նա տեսնել: Թող իմանան շառաւիղի կանայք, թէ անցան այն ժամանակները, երբ մարդիկ նայում էին կանանց վրա ինչպէս աղաւթների վրա, այժմ աշխարհը այս լուսաւորեալ դարում նայում է նրանց վրա, որպէս մարդու վրա, ունեն նրանք իրաւունք և պարտականութիւն հասարակութեան քաղաքական, հոգալ իրանց զաւակների ընտանեկան դատարարական համար, տեղ տալով ազգի բոլոր պահանջներին: Ազգը պահանջում է նրանցից, որ իրանց հայրական կամքի հետ տան իրանց զաւակներին հայութիւն, թէ լեզուով և թէ անձնազօր սիրով դէպի ազգը: Թող յայտնի լինի ընթերցողներին, որ ազգի ապագայ վիճակը կախված է ընտանեկան դատարարականութեանց: Ուստի թող ամեն ծնողը աշխատեն կատարել իրանց պաշտօնի պարտականութիւնը:

Ի. Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվար ամսին վախճանվեցաւ ՄՕՍԿԱՅՈՒՄ ռուս երեւի դերասան Սերգէյ Վասիլէ-վիչ Շոստակովիչ, որ այսքան ժամանակ Մոսկվայի ռուսաց թատրոնի մէջ խաղում էր ամենանշանաւոր դերերը:

«Тифл. Вѣстн.» լրագիրը լսել է որ Թիֆլիսի մէջ յայտնի ազգական Պլիւշէվսկի այս օրերս կաւանաւորվեցաւ քրէական յանցանքի պատճառով:

Լսում ենք, որ օրիորդ Նինա Անդրէեւիկուսպանան գործի մեղադրվածներից մէկը, որին դատարանը քաղաքացիացի, Նիկոլայ Չիտուա, նահանգական դատարանի մէջ գործի վերջնաւոր միւս օրը ենթարկվեցաւ արեւնի հարուածին:

Մեզ հաղորդում են ՄԵՐ-ՇՈՒԼԱՎԵՐԻՑ որ Բօրչալուի գիւղերում շատերը մեռնում են յանկարծակի մահով: Մի գիւղում ամբողջ ընտանիքներ հիւանդ են, որոնց անդամներից շատերը նոյնպէս մեռնում են յանկարծակի մահով: Թեղթակցը չէ որոշում հիւանդութեան տեսակը:

Այս տարի տեղական լրագրութիւնը երկի լրջված կը լինի դատաւարական գործերով: Օրիորդ Անդրէեւիկուս գործից յետոյ կը ընկնի քաղաքիս թիւքաց կօնսուլի և նրա կնոջ սպանման գործը, հաջորդելու բռնաբարութիւնը մի աղջկայ վրա և վերջապէս չինոս թղթադրամ չինոզների գործը:

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ այս օրերս հասաւ Թիֆլիս ռուսաց դերասանական խումբը պ. Պալմի կառավարութեամբ և շուտով սկսելու է իր ներկայացումները քաղաքային թատրոնում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են: «Հաբաթ օր, փետրվարի 25-ին, այստեղի հայոց եկեղեցում կատարվեցաւ գեներալ Եփրեմիկովի հոգեհանգիստը: Եկեղեցին լի էր հայ և ռուս հասարակութեամբ: Ամենքը եկել էին հանգուցեալի յիշատակին իրանց յարգանքը նուիրելու: Հայր Վահան վարդապետ Բաստամեանց մի կարճատեւ ճառ խօսեց, որով ցոյց տուեց հանգուցեալի նշանակութիւնը: Գեներալ Եփրեմիկով, ասաց քարոզիչը, իր ամբողջ կեանքը նուիրեց ռուսաց տէրութեան ծառայութեանը, նա իր կեանքը մէջ պատիւ բերեց ռուսաց զէնքին իր նշանաւոր հանձնարով, իսկ կառավարչական ասպարիզում ստացաւ ժողովրդի ամենաշնորհ համակրութիւն: Այդ երկտասարդ հանձնարը, ինչպէս և նրա արժանաւոր պաշտօնակիցները՝ Լօրիս Մէլիքով, Տէր-Ղուկասով, երկրորդ Լօրիս Մէլիքով, Լազարեվ, Ալիազով, Գէորգիւկով և ուրիշները պատիւ են բերում հայոց ազգին, կենդանի ապագոյց տալով համայն աշխարհին, որ այդ ազգը ապրում է և պարունակում է իր մէջ այնպիսի բարոյական և մտաւոր առաջնորդ, որոնք այսպիսի ճշմարտեւոր կարող են ներկայացնել այդ տեսակի նշանաւոր անձինք իրանց տէրութեանը: Քարոզիչը վերջապէս իր խօսքը ասելով: «Այստեղի հայ ռուսանոցներից ցանկանալով յարգել բարի և քաջ մարդի և բարի հայի յիշատակը այսօր, ահա, պատճառ եղան հանգուցեալի հոգեհանգիստ կատարելուն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

«Полоса» լրագիր Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետեւեալը: «Նորիւրում ես ձեզ ծանօթացրի այն գրութեան հետ, որ հայոց պատրիարքը ներկայացրեց փետրվ. 4-ին թիւքաց առաջին միւնիստրին: Մի քանի օրից յետոյ Ահմեդ-Վեֆիկ-փաշան իր մուստեշարին ուղարկեց պատրիարքի մօտ կարճատեւ իմանալու, թէ ի՞նչ են պահանջում հայերը:—Դուք կամենում էք, ասել է մուստեշարը, որ Բ. Գուլը մի քանի կարգադրութիւններ անէ հայերի համար: Այդ ի՞նչ կարգադրութիւններ են, ձեր գրութեան մէջ դուք չէք ցոյց տուել: Արդեօք դուք ձգտում էք աւտօնօմիա ստանալ: Առհասարակ դուք ի՞նչ էք պահանջում:—Ձեր առաջարկած հարցը, պատասխանել է պատրիարքը, այնքան նշանաւոր է, որ ես չեմ կարող ձեզ բառացի պատասխան տալ: Ես ձեզ կը գրեմ»:

Եւ ճշմարիտ փետրվ. 16-ին Ներսէս եպիսկոպոսը ներկայացրեց Բ. Գրանը մի գրութիւն, որի գլխաւոր բովանդակութիւնը հետեւեալն է:

«Հայերը այժմ այլ ևս ոչինչ չունեն ինդրելու Բ. Գրանից: Արդէն 40 տարի է, որ

մենք նրան անդադար դիմում ենք մեր գանգատներով, բայց նա մեզ չէ լսում և չը նայելով, որ անդադար մենք խաբւում էինք, այնու ամենայնիւ մենք միշտ հաւատարիմ մնացինք: Այս մեր սխալն է, որովհետեւ Բ. Գուլը ոչ թէ միայն երբեք չը գնահատեց մեր անձնադրութիւնը, այլ արհամարհեց մեր հաւատարմութիւնը և փոխանակ մեզ պաշտպանելու, փոխանակ մեր վրէժն առնելու, նա խրախուսեց մեր դահիճներին: Եւ ճշմարիտ Թիւքիայում յանցանքը վարձատրվում է, իսկ արարւորութիւնը պատժվում: Այլ ևս ես ձեզ ոչինչ չունեմ ասելու և ձեր և մեր մէջ ոչինչ ընդհանուր բան չը կայ: Տաս օր սրանից առաջ, ես վերջին անգամ բողոքեցի Բ. Գրանը Փետրվ. 4-ին ես մի շարք գրութիւններից յետոյ մէկն էլ ներկայացրի ձեզ, և նրանից յետոյ մեր հաւատաւիցները Պարսկաստանի ռահմանի վրա նոր սպանութիւններին զօհ եղան, չը նայելով իմ բոլոր բողոքներին դուք հաւատարիմ մնացիք ձեր դարեւոր անհոգութեանը և ինչպէս առաջ մեր սպանողները անպատիժ մնացին: Սպանութիւն, բռնաբարութիւն, կողոպտութիւն, հրդեհներ, ահա սա է եղել Հայաստանի վիճակը ձեր իշխանութեան ժամանակ: Ձեր նպատակն էր մեզ քննել և ձեր կոռուպցիների ձեռքերից կորաւ Հայաստանը: Դուք հարցնում էք, թէ մենք ի՞նչ ենք ցանկանում: Մենք այլ ևս չենք կարող ձեզ յայտնել մեր ցանկութիւնները և սպասում ենք միայն հիշող Աստուծոյ արդար դատաստանին: Ուրեմն գրում է թղթակիցը, Բ. Գրան և հայերի մէջ կատարեալ երկպառակութիւն կայ և եւրօպան անուշադիր չէ թողնի հայերին քրիստոնէական վիճակը որոշելու ժամանակ: Այս տարաբաղդները, որոնք այսքան դարեր հալածվում էին և անօգնական էին, սկսում են փոքր ազատ շունչ քաշել: Դեռ նորիւրում հայերը Թիւքիայում կատարեալ օտարներ էին: Սրանցից մէկը ինձ պատմում էր, որ ետնիւրների իշխանութեան ժամանակ նրան ստիպում էին Ստամբուլ փողոցները աւելել և անցորդների կօշիկները մաքրել: Այդ էր պատճառը, ասում էին ինձ, որ հայերը մէջքից քարշ էին անում թաշ կինական, որոնցով թող էին մաքրում, իսկ Հայաստանի խորքերում հիմա էլ կը պատահէ հայերի, որոնք այդպիսի թաշկինակներ ունեն: Այս բոլոր յիշատակները դեռ կենդանի են հայերի համար, սրանով պէտք է երեւակայել թէ նրանք որքան ուրախ են, որ վերջապէս դարեւոր տանջանքներից յետոյ իրանց ազատութեան ժամն էլ խփեց: Այս քանի օր առաջ անգլիական դեսպան Լայարդ պալատում խօսելով մի բարձրաստիճան հայի հետ, ասաց նրան. «Եթէ Թիւքաց պետութիւնը ընկնում է, նրա անկման պատճառը դուք քրիստոնէաներդ էք, որովհետեւ եթէ դուք թող տայիք ձեզանից զինուորներ հաւաքել գործի գրութիւնը այժմայայտ չէր լինի: Ապագան շուտով ձեզ ցոյց կը տայ, որ այդպէս վարվելով դուք դաւաճանեցիք ձեր ճշմարիտ շահերին»:

ԻՏԱԼԻԱ

Իտալական միւնիստրութեան նախագահ պ. Դէպրէտին աշխատում է համաձայնել ընդգրկնադրական կուսակցութեան հետ որ պահանջում է փոխել միւնիստրներից մի քանիսը և միւնիստրութեան մէջ ընթերցումներ մտցնել:

Պիոս IX իւր գրատունը կտալով ժառանգութիւն է թողել հռոմէական սեմինարիային իր մոտերիներին, և սպասաւորներին ամական թոշակներ է կտակել և մի քանի եկեղեցիների և առաջնորդների համար յիշատակներ և հրիտակներ է թողել: Նաեւ Իտալիայի գահընկեց իշխաններին ընծաներ է կտակել: Շամբօրի կոմսին կտակել է մոլայիկի ձեւով շինված մի թանկագին յիշատակ և Սպանիայի

նախկին թագուհի Եղեղիսի թողնել է արքայական իշխանութիւնը: Այդպէս թագուհի Եղեղիսի թողնել է արքայական իշխանութիւնը: Այդպէս թագուհի Եղեղիսի թողնել է արքայական իշխանութիւնը:

Պապի ընտրութեան համար գումարված կարգինաւերի առաջին ժողովում, 60 ձայնաւորներէ 27 կարգինաւ Պէկկին, 12 կարգինաւ Բիլլոյին և 10 կարգինաւ Լուկայի համար քուէ էին տվել. իսկ մնացածները Պրանկի, Պարոկի և Լէոօսովսկի կարգինաւերի համար: Ներքո քուէարկութեան ժամանակ կարգինաւ Պէկկին ունեցել է 36 ձայն: Թէպէտ կարգինաւ Պրանկի կողմնակիցները ծնրադրելով կարգինաւ Պէկկի առջև, պապ ընտրուել են նրան, բայց նա կամեցել է որ օրէնքի համեմատ ընտրվի որովհետև հարկաւոր էր 60 ձայնաւորների 2/3 մասին, այն է 40 ձայն ունեւալ ընտրվելու համար: Վերջապէս երրորդ քուէարկութեան ժամանակ, 60 սխալական կարգինաւեր աջողել են մի անխալ պապ ընտրել 41 ձայնով:

Լեոն XIII որոշել է արդէն իր գլխաւոր սենեկապետ (camerlingue) կարգինաւին՝ դա Շվարցենբերգին է: Օտարապէի կարգինաւների մէջ ամենից աւելի չափաւորականն է և այնպիսի պատիւ և յարգանք է վայելում որ ասում են թէ նա կընտրվէր պապ թէ իտալացի լինէր և ոչ թէ աւստրիացի:

Հռոմից գրում են փետրվարի 9/21-ին թէ նոյն առաւօտ կարգինաւները հաւաքվելով Սիքստինի եկեղեցում, հանդիսաւոր կերպով երգել են «Ջեզու Աստուած փառաբանեց» (Te Deum) գահաբանական աղօթքը և նորընտիր պապը պատարագ է մատուցել: Գահաբանական աղօթքից յետոյ՝ նորընտիր պապի օտքը համբուրելու արարողութիւնը կատարվել է և այնուհետև պապը իւրաքանչեւ կարգինաւներ գրկել է երկու անգամ: Նոյն օր, պապը իր կարգինաւներից չորսպատմած, ընդունել է ամեն տէրութիւնների Վատիկանում ունեցած դեսպաններին: Պրանկիական դեսպանը պ. դր Բօգ և աւստրո-ունգարական դեսպանը ամենից առաջ են ընդունվել:

Լեոն XIII-ի ընտրութենից շատերը հետեւեցնում են թէ պետութեան և եկեղեցու մէջ հաշտութիւն կը լինի և Վատիկանը էլ չի երազել իր մարմնաւոր իշխանութեան օրերը: Ուրիշներն էլ կարծում են թէ պետութեան դէմ եկեղեցու պատերազմը կը սաստկանայ և պապութիւնը կը քայքայէ անհաշտ յետադիմականներին, որ առաջադիմութեան ամեն բարիքները ջնջեն:

Գուցէ այդ երկուսն էլ սխալվում են: Պապական եկեղեցու պատմութիւնը ցոյց է տալիս մեզ որ նա սովորութիւն չունի արամատական վերանորոգութիւններ (րէֆորմ) անել: Նորընտիր պապն էլ վերջապէս մի կղերական է և ի հարկէ պապական եկեղեցու ողով անած և այդ բարձր աստիճանին հասած: Բայց միւս կողմից էլ, եւրօպական քաղաքակրթութիւնը օրից օր առաջանում է և պապական յետադէմ գաղափարների տիրապետած տեղերից հողեր է խլում: Մինչև անգամ ինքը Պիոս IX այնպէս չը վարվեցաւ իտալական կառավարութեան հետ 1878 թւին, ինչպէս վարվում էր 1870-ին: Ութ տարվայ մէջ եկեղեցին բաւականին քայլ առաջ էր դնացել և մօտեցել դէպի իտալական կառավարութիւնը, նրա հետ հաշտվելու համար: Սակնից հաւանական այն է որ Լեոն XIII շարունակէ Statu-quo (այժմեան դրութիւնը):

Ասում են թէ Լեոն XIII դիտաւորութիւն ունէ մի ժողով գումարել Հռոմում, եկեղեցու և իտալական տէրութեան մէջ եղած հարցերը լուծելու համար: Այդ լուրը, եթէ հաստատվել, շատ բարեգուշակ չէ նոր պապութեան համար: Նա առաւանական է որ անհաշտ կղերականները մեծամասնութիւն կազմելով այդ ժողովի մէջ, իտալական կառավարութեան և եւրօպական քաղաքակրթութեան դէմ կ'որոշ սաստկացնեն և տարօրինակ վար-

դպաւտութիւններ էլ հնարեն: Հռոմում գումարված եկեղեցական ժողովները ընդհանրապէս այդպիսի արդիւնք են ունեցել:

Հեռագիրը լուր բերեց թէ Լեոն XIII բժիշկների խորհրդին հետեւելով, պատուիրել է որ իր համար բնակարան պատրաստեն Կաստէլ-Պանֆօլֆօյի ամառանոցում: Ուրեմն նորընտիր պապը չէ կամենում Պիոս IX-ի նման իրան գերի համարել Վատիկանում: Նրեի թէ ոչ միայն բժշկութիւնը, այլ և դիպլոմատիան և առողջ դատողութիւնը խորհուրդ են տալիս պապին այդպիսի տեղափոխութիւն անել:

Վատիկանում ծառայողներից շատերը արդէն սկսել են թշնամեալ նորընտիր պապին: Սովորութիւն է որ պապի մեռած ժամանակ Կատարիայի պաշտօնեաները իրանց մի տարեկան վարձը և Վատիկանում ծառայողներն էլ երեք ամսական կանխիկ կը ստանան: Նորընտիր պապը եղծեց այդ սովորութիւնը, պատճառելով թէ եկեղեցու գանձը նեղ դրութեան մէջ է: Սպասաւորներից շատերը արձակեց, շատերն էլ իրանք շտապում են հրաժարվել: Փետրվարի 13/25-ին պապը Սիքստինի եկեղեցուց հանդիսաւոր կերպով դուրս գալու ժամանակ, երբ տեսել է արքունական դահլիճում հարկաւոր պահպաններ կարգով շարված իրան պատուի համար, ասել է թէ՛ արանք մի ամբողջ բանակ են կազմում. առ այժմ հարկաւորութիւն չունեն դրանց. ես պատերազմ անելու չեմ: Յետոյ գնեցաւ Կանցլերին ասել է թէ իր ծառայութիւնը խնդրելու համար կը դիմէ նրան երբ եկեղեցու թշնամիների դէմ պատերազմ ունենայ: Գնեցաւ հասկացել է որ էլ ինքն գործ չունէ Վատիկանում: Նորընտիր պապի այսպիսի խնայողական գործերը որոնք շատերի շահերին են դիպել, իր դէմ թշնամութիւն և վերէժխնդրութիւն գրգռած են:

Պապական վարչութեան հաշիւների մէջ դրամական շատ մեծ նենգութիւններ դուրս են եկել: Օրինակ, ձիերի համար աւելի ծախքեր գրված են եղել հաշիւներից մէջ քան թէ ձիեր կային: Նա առանց իրանց բուն արժէքի մի քանի անգամ աւելի գրված են եղել հաշիւների մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԲՆԱՅԻՑ

Վան, 1877 դեկտեմբերին (1)

Թիւրք կառավարութիւնն ոչինչ պակաս կը կեղեքէ մեզ և կը յափշտակէ քան թէ քուրդերն: Ներկա տարեկան տուրքն մի անգամէն կանխիկ կը հաւաքէ, այդ պատճառով տեղացի ժողովուրդն, մասնաւոր գիւղացիներն, անտանիկ և սոսկալի նեղութիւններ կը կրեն: Բաց յայտանէ, Բայազէդի դէմ և Վանէն մի օրի չափ հեռի Բերկրի կեցած օսմանեան բանակին ամբողջ ուսուստն և այլ շատ բաներ գիւղացիներն ստիպուած են հողած ձրիապէս և հարկաւոր եղած ամեն բաներն փոխադրել մինչև բանակատեղը առանց վարձքի: Վանն մարդ որ փոքր ի շատէ գիտէ խորհիլ և դատել, իսկոյն կիմանայ թէ ինչ անհարկն նեղութեան մէջ են այժմ խեղճ գիւղացիներն զորս արդէն քուրդերը կողոպտած և ամեն բանէ զրկած էին: Քանի գիւղացիներ կը ճանաչեմ որք այդ բանակի պաշարներն հողաւոր համար ստիպուեցան իւրեանց հազար զոհատները հանել ծախել և հազիւ կարողացան ազատուել: Բանակին հարկաւոր եղած բոլոր բաներն ձրիապէս և սոսկալի խտրութիւնով աւանդեցան ժողովուրդէն և դեռ անդադար կը պահանջեն: Գրեթէ բոլոր գիւղացիները գրատաներն ձրիապէս կաշխատցունեն զօրաբանակին և կառավարութեան վերաբերեալ բաներ փոխադրելու համար, ինչպէս որ նահանգապետն պաշտօնապէս Բ. Գուռն հեռագրած է, զոր լրագիրներն հրատարակեցին: Նրեակայեցէք թէ ինչ կը

1) Բաւական ժամանակ է որ Վանի հետ հարգակցութիւնը գրեթէ դադարած լինելով պատերազմի և ձմեռայ պատճառով, այս նամակը այս օրերս հասաւ մեր ձեռքը: Մենք էլ նրանից մի քանի տեղեկութիւնները միայն հրատարակում ենք, մնացածները բաւականին հնացած լինելով:

լինի Վանի ժողովուրդի նման մի թշուառ ժողովուրդի գրութիւն որ պարտաւորուած լինի հողալ մի մեծ բանակի պէտքերն ձրիապէս և շուտով: Բացի այս պաշտօնական տեղեկութիւններն, քուրդերի և թիւրքերի հարստահարութիւններն ալ անպակաս են: Նոյեմբերի 21-ի գիշերն քուրդեր յարձակեցան Աստուածաշէն գիւղին վրա (որ Վանէն 3 ժամ հեռի է), ոչխարներն յափշտակելու համար, բայց երբ գիւղացիներն խմբովին ընդդիմացան նոցա, դատարկածեռն փախան, միայն թէ ունէ Վարդանի եղբայրներէն Մարտիրոսն սպանվեցաւ և Յարութիւնն վիրաւորուեցաւ: Այսպէս ահա ամեն գիւղ տագնապի մէջ է: Քուրդերի մի քանի ցեղերն, 20-30 անձերէ բաղկացած խումբերի բաժնուած, կը շրջին ամեն տեղ և կը մտնեն ամեն գիւղ մի քանի օր: Աւելորդ է ասել թէ ինչ կանեն այնտեղ: Այդ աւաղակ խումբերի հարուածներէն ազատ չէ մնացած և ոչ մի գիւղ: Քուրդերն երեք անգամ յարձակեցան Ալիւր գիւղի վրա ալ. բայց գիւղացիներն քաջապէս դիմադրելով յետ մղեցին և փախուցին դնսա: Գալով քաղաքի ներքին վիճակին, համեմատական հաշիւով օրական 10—12 հայ կը ծեծուին զորքերէն կամ թիւրքերէն, թող թաղաքի պատճառով: Վանն զի այդ անօրէններ կը պահանջեն որ հայ խանութպաններն 130 դրուշի ընդունին թղթագրամն, մինչդեռ հազիւ 55-60 դրուշ կարժէ: Խիստ շատ անգամ ալ, ինչ որ ուզեն, կ'աւանդեն կը տանին հայրի խանութներէն, կամ բնաւ չը վճարելով կամ կէս գինն միայն վճարելով:

Ահա ձեզ Վանէն լուրեր զորս մանրամասն նկարագրելու համար հատորներ հարկաւոր են: Գծադրագույն հաղորդակցութիւններէ գրեթէ բոլորովին դուրի մնացած ենք, չենք կարող ճիշդ և ստոյգ տեղեկութիւններ ստանալ մեր շուրջ կատարածներին վրայ: Դատապարտուած ենք անզգայ մնալ քաղաքական ախարհի գործերին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Թիւրքաց կառավարութեան չինիլ տված և մի տարի կայ որ Լօնդօնում Վիկտորիայի նաւարաններում արգելված Մէ մոտ 1.5 էյ շողենաւոր որ բոլոր տէրութիւնների ունեցած դրահաւոր նաւերի մէջ ամենալաւերից մին է, անգլիական կառավարութիւնը գնել է: Ճիշդ չը գիտենք թէ Անգլիան ինչ է վճարել այդ դրահաւորի համար, բայց ասում են թէ 500,000 անգլիական ստերլինգ ոսկի (գրեթէ 4, 500,000 ռուբլի) արժէ: Մէ մոտ 1.5 էյ 340 ոտք երկայնութիւն և 60 ոտք լայնութիւն ունի: Կարելի է 12 թնդանօթ ունենալ. բայց անգլիական կառավարութիւնը դեռ ևս այնպէս չինում է որ 12-ից աւելի թնդանօթ դրվի նրա մէջ:

— Լօնդօնի «Morning Advertiser» լրագիրը, Բէրլինից ստացած հիմնաւոր տեղեկութիւնների հիման վրա, մարտի 6-ից յայտնում է, որ փետրվարի 17-ին (մարտի 1-ին) Բէրլինում դաւաճանութիւն յայտնվեցաւ սուլթանին դահից գցելու դիտաւորութեամբ:

— «С. Петерб. Вѣд.» լրագրին Բերլինից հեռագրում են փետրվարի 26-ին, որ այստեղի բարձրատիճան մարդիկը, մասնաւոր Բիւմարիւր, անբաւական են նրանով որ Կոնֆէրէնցիան Բերլին պէտք է գումարվի, վախճանալով որ այս հանգամանքը կարող է պատճառ դառնալ Գերմանիային արեւելեան գործերում խառնվելու, և շատ կարելի է նա կը ստիպվի աւելի նշանաւոր դեր խաղալ Բերլինի կոնգրէսում, քան թէ այդ կամենում է այստեղի դիպլոմատիան: Իսկ ինչ վերաբերում է Բիւմարիւրի որպէս կոնգրէսի ապագայ նախագահին, նրան ընկնում է այն դատաւորի դերը, որից նա հրաժարվեց իր ծառում:

— Աթէնքից հեռագրում են «Ազիլի Բնկերութեան» մարտի 10-ին (փետրվարի 26-ին) որ Գերբին յունաց կառավարութեանը Վենիզամի միջնորդութեամբ հաղորդեց որ Անգլիան ընդունում է Յունաստանի ինդիքը այն է ներկայացուցիչ լինել նրա տեղ կոնգրէսում:

— «Հաւասի Բնկերութեան» հաղորդում են Ստրասբուրգից մարտի 5-ին, որ Էլզաս-Լօտարինգիայից գաղթելը դեռ ևս սաստիկ կերպով շարունակվում է այն անորոշ դրութեան պատճառով որի մէջ գտնվում են Գերմանիայի հետ միացած երկիրները: Գերմանական կառավարութիւնը 1876 թւին դատաստանական կերպով հայտնում էր և զանազան պատիժների ենթարկեց 6,230 Էլզաս-Լօտարինգիականներին, որոնք գաղթում էին գերմանական ծառայութեանց ազատ վերա համար:

— «Ազիլի Բնկերութեան» հաղորդում են Մարտի 10-ին (փետրվարի 26-ին) որ Կոնֆէրէնցիան մինիստր յայտնեց սենատին որ արտասահման գտնված բոլոր սպանիացիք կարող են վերադառնալ Սպանիա: Եթէ նրանք մնում են արտասահման այդ իրանց կամքով է:

— Կ. Պօլսից հեռագրում են փետրվարի 5-ին (փետրվարի 21-ին) որ ռուսաց գործակաւոր պ. Նոու. Երկուշարթի օրը ընդունվեցաւ սուլթանի մօտ. Գրաթի ինչապետի վրանցիլով Կ. Պօլսի միջով այցելեց առաջին մինիստրին և արտաքին գործերի մինիստրին, իսկ երեկոյեան վերադարձաւ Սան-Ստեֆանօ:

— «Հաւասի Բնկերութեան» հաղորդում են Աթէնքից փետրվարի 27-ին որ Թիւրքաց աստիճանաւորները Էպիրոսում գերի ընկան ապստամբների ձեռքը. Հազար ընտանիք Գիվրից պէտք է միանան ապստամբների հետ: Ապստամբները կարեցին Գէվէնօի և ծովի մէջ եղած հաղորդակցութիւնը: Թիւրքերը հրացաններ են արձակում՝ քրիստոնեայ ընտանիքների վրա: Գաղթականներից 70 ընտանիք հասան Կորֆու. Գրիստոնեաների ապստամբները կատարվեցաւ Կանէում Կրիտի կղզու վրա:

— «Presse» լրագիրը հաղորդում է հետեւեալէրց-հէրցօգ Ֆրանց Կարլի մասին, որ նորերում վախճանվեցաւ: Նա աւստրիական այժմեան կայսրի հայրն է և ծնվեցաւ 1802 թւին: Երբ որ նրա եղբայրը, կայսրը Ֆէրդինանդ 1847 թւին հրաժարվեցաւ գահից, նա նոյնպէս հրաժարվեցաւ աւստրիական գահից յօգուտ իր որդու, այժմեան կայսրի: Նա վախճանվեցաւ մի շաբաթվայ հիւանդութենից յետոյ:

— Բէրլինից հաղորդում են լրագիրներին որ գերմանական կայսրը տուեց իր համաձայնութիւնը Բէրլինում Կոնֆէրէնցիայի գումարվելու մասին: Այս առիթով բանակցութիւնները շարունակվում են:

— «Allg. Zeitg» լրագիրը հաղորդում է իր վերջին համարում Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ կապված հաշտութեան դաշնագրի մէջ գաշնագրի 16-րդ կէտը խօսում է Հայաստանի վրա հետեւեալ կերպով: «Հայաստանը ստանալու է վերանորոգութիւններ, համեմատ տեղական պահանջներին և նրան տրվելու է ապահովութիւն քուրդերի և չէրքէզների դէմ»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲՈՒՄԱՐԵՍ, 6/18 մարտի: Ազգային ժողովը քննում էր Դուռնայ գետի վրա նաւադնացութեան հարցը: Մեղաքներից մէկը հերքում էր այն լուրը, որ իբր թէ ռուսները Սուլթանականքներում են նաւերը, չեն թողնալ, որ նաւադնացութիւն սկսվի, որպէս զե միջոց ունենան առանց մրցութեան դուրս տանել հաջը և այլ մթերքները: Արտաքին գործերի մինիստրը խոստացաւ միւս պետութիւնների հետ զեղովել այդ հարցով:

ԼՕՆԴՈՆ, 7/19 մարտի: Նրեկ անգլիական պարլամենտին ներկայացրին Յունաստանին վերաբերեալ դիպլոմատական գրադրութիւնը, որից երեւում է հետեւեալը: Փետրվարի 23-ին յունաց մինիստր Ինիանիսը մի հեռագիր ուղարկեց Լօնդօնում գտնվող յունաց գործերի հաւատարմատար Գերմանիային, որի մէջ ցանկութիւն էր յայտնել, որ Յունաստանը կը մասնակցի լինելու կոնգրէսին: Ինքի հեռագրով տեղեկացրեց Գերմանիային, որ նա արդարացի է համարում բաւականացնել Յունաստանի ցանկութիւնը: Այդ մասին Ինքի տեղեկացրեց պետութիւններին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 9-ին: Լօնդօնի վրա ռուսաց ռուբլը արժէ 25 1/2 պէս, Համբուրգի վրա ռուսաց 100 ռուբլ արժէ 217 մարկ, Փարիզի վրա 267 Ֆրանկ: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 95 3/8 ռ., երկրորդ 95 1/8 ռ., երրորդ 95 ռ., չորրորդ 95 1/8 ռ., արեւելեան փոխառութիւնը 93 3/8 ռ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսը արժէ 229 ռ. 50 կօպ., երկրորդ 229 ռ. 50 կօպ., պոլսկիներէրալի գինը 7 ռուբլ 78 կօպ., Տրամպորութիւնը բօրայի մէջ վերել թոյլ է:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ